

**ՊՈՒԿԱՐԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ «ԳՐԱՍԻՄԱՑ» ԵՂՔԱՅԻՈՒԹԵԱՆ  
110-ԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ**

**ՅԱԿՈՐ ԿԻԼԿԵԱՆ (Բուզարիա)**

Փլովտի կը հանդիսանայ Պուլկարիոյ այն քաղաքը, որ Արեւելեան Ռումելիոյ մայրաքաղաքը եղաւ Ռուս-Թրքական 1877—1878 պատերազմէն վերջ, ուր 1888 թուականին հիմնուեցաւ պուլկարահայութեան անդրանիկ գրադարան-ընթերցարանը: Վերականգնել 110 տարի գոյութիւն ունեցող լուսաւորութեան ու մշակութային այս ազգային կառոյցը նախապատրաստական աշխատանք կը պահանջէ, ինչպէս եւ գրաւոր փաստերու ու տուեալներու առկայութիւնը: Եթէ «Գրասիրաց»-ի 30 ամեայ գործունէութեան մասին հաստատ գրաւոր գործ մը տպագիր վիճակի մէջ՝ կարելի է գտնել որպէս հազուագիտ օրինակ, դժբախտաբար յաջորդող տասնամեակներուն պատկերը անստոյգ է, տեղեկագիրներու կամ ամփոփումներու չգոյութեան պատճառով: Սպիտակ էջերը «Գրասիրաց» ընթերցարանին կարելի է մասամբ լրացնել պուլկարահայ մամուլին մէջ անոր գործունէութեան շուրջ թղթակցութեաներէ, բան մը, որ երկար ժամանակ ու աշխատանք կը պահանջէ:

«Գրասիրաց» եղբայրութեան 30 ամեայ յոբելեանական Տեղեկագրութիւնը՝ որ միակ տպագիր աղբիւրն է այդ ժամանակաշրջանին համար, հիմք մըն է ամփոփ գիծերու մէջ ներկայացնել անցած ուղին: Հարկաւոր է նշել, որ «Գրասիրաց»-ի յայտնումը փլովտիահայ գաղութին մէջ ինքնածին ու յանապատրաստի երեւոյթ մը չէ, այլ պայմանաւորուած է անոր հիմնումէն առաջ գոյութիւն ունեցող երկրի քաղաքական-տնտեսական իրողութիւնները, ազգային կեանքին էջ խմորումներէն եւ անոնց բարենպաստ շունչին կենարար արձագանգը:

19-րդ դարու կէսէն վերջ ալ փլովտիահայ գաղութը ներամփոփ կեանք կը վարէ, կը շարունակէ տիրական ըլլալ թրքաբարոյ կենցաղ մը եւ թրքերէնի գերիշխող դրութիւնը հայ տուններէն ներս: Սահմանափակ յարաբերութեան մէջ կը գտնուի կրօնական ու առեւտրական գեներալ վրայ՝ կապ պահելով Ատրիանոպոլսոյ ու Կ. Պոլսոյ հետ նախ եւ առաջ: Թրքական բռնութեան տակ ազգային կեանքը անգոյն է, որ յետզեւեմ պիտի ստանար իր դիմագիծն ու գունաւորումը: Ըստ «Գրասիրաց» եղբայրութեան Տեղեկագրութեան հայ տեղական գաղութը իր կրթական շարժումի ու ազգային զարթօնքի ծիլերը կ'արձակեն 70-ական թուականներուն: Յատկանշական է, որ ճիշտ այդ ժամանակներուն քաղաքիս Առաջնորդարանը իր սրահը կը յատկացնէ ժողովրդական ընթերցարան-լսարանի մը համար, մտաւոր կեանքի ու ազգային ինքնագիտակցութեան կը ծառայեն տարբեր ժողովներն ու բանախօսութիւնները եւ անոնց զուգընթաց ազգային ոգիով արտասանութիւններն ու երգերը: Որքան որ Առաջնորդարանը կը հանդիսանայ այդ ձեռնարկներուն խթանող ուժը, սակայն զանոնց կազմակերպողներն ու իրագործողները, ոգի ներշնչողները եղած են Ազգային վարժարանի ուսուցիչները՝ մանաւանդ Մաղաք Օիշմանեան ու անոր որդին Նշան Մաղաք Օիշմանեանը՝ 1864—1867 թուականներէն սկսեալ: Քանի մը յաջորդող տարիները եւ Պարոն Հիրշի երկաթուղագիծը՝ կոչուած Արեւելեան նախապատրաստական փուլ մըն են փլովտիահայ գաղութի իսկական զարթօնքին ոչ միայն առեւտրա-տնտեսական այլեւ անոր գաղափարներու մուտքով հայ համայնքէն ներս, որ այնքան մեծ թիւ մը չի ներկայացներ՝ շուրջ 200 ընտանիք կամ շուրջ 2000—2500 հոգի:

Պուլկարիոյ ազատագրութիւնը թրքական լուծէն նոր էջ մը կը բանայ անոր բնակչութեան բազմակողմանի զարգացման համար: Արեւելեան Ռումելիան, որ Պերլուի 1878 թ. վեհաժողովի կողմէ Մայր-Հայրենիքէն խլուած էր եւ ձգուած Մուլթանի գերիշխանութեան տակ, ներքին ինքնավարութիւն մը կը վայելէր, հարաբերական ազատ պայմաններ ըստեղծելով նաեւ հայկական մշակութային, կրթական ու տնտեսական յառաջդիմութեան համար:

Առաջին նշանակալից երեւոյթը 1877—1878 Ռուս-Թրքական պատերազմին ասարտէն

վերջ հայկական կեանքի համար՝ Փլովտիի մէջ հարեւրական ընկերութեան մը երեւան գալն է, որ միայն կարճ ժամանակ մը կը շողարձակէ: Այդ պատերազմէ երկու տարի վերջ Փլովտիի մէջ կը հիմնուի Դպրոցասէր ընկերութիւնը՝ որ բաւական տրիներ պիտի պահեր իր գոյութիւնը: Կը սերտանան հայ առեւտրական տուներու յարաբերութիւնները միւս թրքահայ գաղութներու առեւտրական հիմնարկներուն հետ, Կ. Պոլսոյ ու Ատրիանապոլսոյ հայ առեւտրական տուները իրենց մասնաճիւղերը կը բանան քաղաքին մէջ: Նոր շունչ մը կը ներհոսի փլովտիահայ կեանքէն ներս՝ շնորհիւ Թուրքայէն ստացուած հայերէն թերթերու միջոցով, հակուակ որ տակաւին ոչ բոլոր հայկական խաւերը ընդգրկուած են ընդհանուր աշխուժացումէն:

Նոր քաղաքական ու տնտեսական պայմանները 80-ական թուականներուն արդեն պատրաստած էին ազգային ինքնագիտակցութեամբ տոգորուած նոր սերունդ մը՝ անցած Ազգային վարժարանի բովէն եւ պատրաստ իրեն վիճակուած ազգային պարտականութիւնները իր ձեռքերուն մէջ առնելու: Եւ իրօք 1883 թուին Հայոց վարժարանի ուսուցիչ՝ Տաճատ Լուսֆեանի՝ յոսցումով ու նախաձեռնութեամբ կը հիմնուի «Գրասիրաց» ընկերութիւնը, որուն գործադիր անդամներ կը դառնան Ազգ. վարժարանի վերջին դասարանի աշակերտները՝ Աբրահամ Յ. Փափազեան, Վարդան Ա. Վարդազարեան, Թազուր Գրիգորեան, Նշան Կարապետեան, Պօղոս Մհ., Խ. Պօղոսեան, Մազուտ Կարապետեան:

Հիմնադիր կազմը տակաւին առաջին տարին կը պատրաստէ կանոնագիրը, որ 28 յօդուածէ բաղկացած՝ Մայիսի 1-ին կը ներկայացնէ Ազգային վարժարանի Հոգաբարձութեան վաւերացման համար: Անոր առաջին յօդուածը ձեւաորոշած է այսպէս. «Գրասիրաց» ընկերութեան Եղբայրութեան նպատակն է նպաստել հայ հասարակութեան մտաւոր զարգացման: Իր նպատակին իրագործման համար «Գրասիրաց» կ'ունենայ Մատենադարան, Ընթերցարան, Գիշերային կամ Կիրակնօրեայ վարժարան եւ Լսարան: Ակզբնական շրջանին այդ առաջադրանքները կը գործադրուին տարբեր յաջողութեամբ, բայց տարիներու ընթացքին այդ օղակները յետզետէ դուրս կը մնան «Գրասիրաց»-ի գործունէութեան ոլորտէն:

«Գրասիրաց» ընկերութեան անդամական կազմը այդ ժամանակ կը բաղկանայ նախ եւ առաջ Ազգային վարժարանի ու միջնակարգ պոլկարական դպրոցի աշակերտներէ, բայց աւելի վերջ անոր անդամ ըլլալու իրաւունք կը ստանան եւ աշակերտ չեղողներ ալ հայ պատանիներ ու երիտասարդներ ինչպէս եւ չափահասներ տարբեր խաւերէ: Անդամական վճարումներէ ու նուիրատուութիւնէ ձեռք ձգուած գումարով Մատենադարանի գրային ֆոնտի հիմը կը դրուի: Հոգաբարձութեան կողմէ նշանակուած եռանդամ վարչութիւնը եռամսեան լրանալով հարկ կը դառնայ Ընդհանուր ժողով գումարել 1 Յունուար 1884 թ. եւ վարչական նոր կազմ մը ընտրել բաղկացած 5 հոգիէ: Անոր ատենադպիր կ'ըլլայ Կարապետ Մ. Վարդազարեան որ երկար տարիներ բարեխղճութեամբ կը կատարէ իրեն յանձնուած գործը նաեւ իր միջնակարգ ուսումը աւարտելէ յետոյ:

Շատ համեստ սկիզբ մը ունի «Գրասիրաց» ընկերութիւնը իր հիմնադրութեան ժամանակ՝ գրադարանը 83 կազմուած գիրքէ կը բաղկանայ եւ որոշ գումար մը, որպէս պահեստի դրամ: Մեծ եղած է սակայն ոգեւորութիւնն ու խանդավառութիւնը վարչութեան ու 56 բաժանորդ անդամներուն, որոնք կը մտադրեն Տաճատ Լուսֆեանի առաջարկին ընթացք տալ, ուսումնասիրելով «յօգուտ ընկերութեան՝ մանկավարժական, բանասիրական յօդուածներ, քաղաքական լուրեր, վաճառականական գործոց եւ դրամական գնոց յոթ համառոտութիւն պարունակող մի շարքաթերթ հրատարակել»: Իտալիստական հիացում մը, որ իրագործում չպիտի գտներ եւ «Յոյս» անունով մտադրուած շարքաթերթը լոկ երազ մը պիտի մնար միջոցներու պակասի բերումով: Յիշենք նաեւ, որ «Տէր եւ Իրատարակիչ եւ պատասխանատու որոշուած է ըլլայ ընկերութեան շարժիչ ուժը՝ Տաճատ Լուսֆեան:

Սօստորապէս մինչեւ 10 նոյեմբեր 1883 թ. այսինքն շուրջ տասը տարի «Գրասիրաց» մատենադարանին յատկացուած կ'ըլլայ Ազգ. վարժարանի նախկին շէնքի սենեակներէն մէկը, որը հարկ կ'ըլլայ թողուլ Վարժարանի նոր շէնքի՝ կառուցման կապակցութեամբ: Վարչութիւնը կը յաջողի Հայկական թաղից մէջ տուն մը վարձել եւ անոր ընձեռած յարմարութիւնները հնարաւոր կը դարձնեն Ընթերցարանի մը բացումը, ուր կը ստացուին հայերէն, ֆրանսերէն ու պոլկարերէն տարբեր պարբերական հրատարակութիւններ: Ընթերցարանը գիշերներն ալ բաց կը մնայ, որպէսզի աշխատող մարդիկ կարողանան հետեւելու այդ մամուլին: Նոյն շէնքին մէջ կը հաստատուի Զբօսարան մը՝ «Ղախաղով՝ պիղեսար եւ թղթախաղ կ'արտօմուի, առանց շահախնդրութեան: Կը գործէ այստեղ նաեւ սրճարան մը, արգիլուած ըլլալով ոգելից ըմպելիքները: Հաճելի վայր մը կը դառնա այս կեդրոնատեղին, որ ժողովրդականութիւն կը վայելէ եւ Հայկական Թանգարան անուն կը ստանայ: Մասնաւոր յանձնախումբի մը հոգատարութեան կը յանձնուի ան, որ իր հերթին կանաւորումը կ'ապահովէ եւ փոքրիկ բնմի մը սարքաւորումը, թատե-

րական անրկայացումներու համար, որոնք կը կազմակերպուին Ազգային տօներու առօրե կամ ձմրան եղանակին՝ օժանդակ ունենալով տեղական հայ թատերասերներ կամ Պոլսէն եկած խումբերին պէս Մաղաքեանի ու Ֆասուլեանեանի խումբերը: Այս տասնամեակին վեցնետիկի Մխիթարեան միաբանութենէն 58 հատոր գիրք նուէր կը ստացուի, իսկ պահեստի գումարը կը բարձրանայ շուրջ 1557 ֆրանքի: Հայկական Թանգարանը երեք տարի կը գործէ եւ բարձր վարձքի եւ այլ պատճառներու բերումով 21 փետրուար 1898 թ. տեղի ունեցած ընդհանուր ժողովը «անհրաժեշտ ու ստիպողական կը նկատէ Թանգարանի փակումը ու Գրասիրացի փոխադրութիւնը Ազգային վարժարանի նոր շէնքին մէջ» կը կարդանք Տեղեկագրութեան մէջ: Նոր վայրին մէջ կարելի չըլլար տեղադրել Թանգարանի կարասիներն ու իրենցնները, որոնց մեծ մասը կը ծախուի, միւս մասը կը տրամադրուի Եղբայրութեան Ընթերցարանին, ու այնպէս կարելի չըլլար վերաբանալ եւ այդպէս կը շարունակուի հետագային ալ— առանց ընթերցարանի: Նոյն տարին թուրք իշխանութեան սարքած ջարդերու պատճառով Պոլկարիա կը ներխուժէ գաղթականութեան ալիք մը, որ կը հստատուի նաեւ Փոլովտի քաղաքին մէջ: Նոր իրավիճակ մը կը ստեղծուի՝ նախ պէտք է կենսական հարցեր լուծել եւ վերջը առաջ տանի մշակութային աշխատանքները, որոնք կը ծաւալին հաշտեցման քաղաքական ընդգծուած շունչով, լեղափոխական գաղափարներու քարոզչութեամբ, ընդգրկուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ: Գրասիրացի վարչութիւնը Ազգ. վարժարանի արտօնութիւնը առնել վերջ վարժարանի սրահին մէջ լսարան մը կը սարքէ, ուր բանախօսութիւններու նիւթերը կը դառնան լեղափոխական շարժումը Թրքահայաստանի մէջ ու այտեղի մեր ազգային կեանքը: Բանախօսները ծանօթ լեղափոխական գործիչներ են ու Փոլովտի այցելող թրքահայ ու ռուսահայ մտաւորականներ ու ազգային դատի պաշտպաններ: 1897 թուականին աշնան վաճէ՞ կը վերադառնայ Պոլկարացի Պետօն՝ Պետրոս Սերնեճեանը ու Գրասիրացի հովանաւորութեան տակ դասախօսութիւններու շարք մը կ'արձանագրէ: Ինք սրղեն Գրասիրացի հին անդամներէն եղած է եւ Եղբայրութեան անընդհատ անդամակցելու պատճառով 1898 թուին անոր Պատույ անդամը յայտարարուած:

Հակառակ յիշուած ելոյթներուն «Գրասիրաց»-ի աշխատանքները մեծ ծաւալ մը ցոյց չեն անրկայացներ: 2է կարելի անտեսել անոր վարչութեան նոր ձեռնարկներուն ի նպաստ գաղթական ու տեղաբնիկ հայ հասարակութեան համար: 1899 թուականին ընտրուած վարչական կազմը դասախօսութիւններու կողքին կը կազմակերպէ դասաւանդութիւններ Ալեքսէն, Ֆրանսերէն ու Պոլկարեան լեզուի իրացման ինչպէս եւ Տոմարակալութեան, Ազգային Պատմութեան Գծագրութեան ու Գեղագրութեան դասընթացքներ: Դասախօսներու ցանկին մէջ երեւելի անձեր կան, ինչպէս՝ Վահան Մանուէլեան, իսկական անուամբ Կարապետ Տողրամաճեան, Ազգ. վարժարանի ուսուցիչ եւ Ն. Յ. Դաշնակցութեան անդամ ու գրող զոհուած Սասունի ապստամբութեան կապակցութեամբ 1904 թ.: 1899 թուականին կը ձուլուի՝ փետրուար 1898 թ. հիմնուած Հայկական ազատ Ընթերցարանը, գոյքերն ու դրամական պահեստի դրամը «Գրասիրաց»-ին փոխանցելով: Լուսաւորական մշակութային գետնի վրայ տարբեր նիւթերու շուրջ գեկոյցներ ու դասախօսութիւններ կը կազմակերպուին, կը վերաբացուի Ընթերցարանը՝ Դպրոցասիրաց ընկերութեան շէնքին մէջ, ուր ժամանակաւորապէս փոխադրուած է «Գրասիրաց»-ի մատենադարանը: Ընթերցարանը կը տրամադրէ 15 վերնագիր պարբերական ժամուր՝ Լուսա, Մշակ, Մուրճ, Հայրենիք, Տարագ, Միութիւն, Բանասէր, Հանդէս Ամսօրեայ, Արաքս, Նոր Կեանք, Անահիտ, Դրօշակ եւ այլն եւ քանի մը ֆրանսերէն թերթեր: Այսօր այդ պարբերական հարստութենէն ոչ ամէն բան պահուած կը մնայ:

«Գրասիրաց» եղբայրութիւնը կը մնայ լուծարքի ենթարկուած Դպրոցասիրաց ընկերութեան շէնքին մէջ, որմէ վերջ հարկ կ'ըլլայ տեղափոխուի Լրագրարակի վրայ վարձուած սրահի մը մէջ: Վարչութիւնը կը ձգտի այլազանել իր գործունէութիւնը եւ կ'իրագործէ ձեռնարկներու շարք մը՝ թատերական անրկայացումներ, համերգ եւ այլն օժանդակութիւնը ունենալով քաղաքիս «Վահան» մարմնամարզական, Երգեցիկ, Թատերասէր խումբերու: Յիշեալ կեդրոնատեղիին մէջ «Գրասիրաց» կը դիմաւորէ իր հիմնադրութեան 20-ամեակը՝ 1888—1908 թուականներու միջոցին: Այդ ժամանակ անոր մատենադարանը կը հաշուէ 882 հատոր հայերէն, 280 հատոր օտար լեզուով գիրքեր մասնաւորաբար ֆրանսերէն ու հայատառ թրքերէն եւ կը ստացուին 10 անուն թերթեր: Վարդը անդամներու թիւը կը հասնի 83 հոգիի, որոնց տան ընթերցանութեան համար բաշխուած են 1922 գիրք կամ միջին հաշուով 1 ընթերցողին 15 գիրք, տարեկան: Կը պակսին գիրքերու քննութիւնը կարողացողներու տեսլանը ըստ սեռի, կրթութեան ու հասարակական դիրքին, բայց յայտն է, որ «Գրասիրաց»-ի ընթերցողներ եղած են եւ աշակերտներ, եւ չափահասներ երկու սեռէն:

1903—1907 թուականներուն «Գրասիրաց» կը հարկադրուի երկու անգամ տեղափո-

խել իր մատենադարանը, իսկ վերջին տեղափոխումը ՑՊանակի ընթացքին կըլլայ 1908 թուականին Ազգային վարժարանի շէնքին մէջ, որ աւարտած էր 1894 թ. այնտեղ մնալու համար տասնեակ տարիներ: Նոր պայմաններու ազդեցութեան տակ ընթերցարանը կը փակուի, հայերէն թերթեր արդեն կը ստացուին հայկական սրճարաններու մէջ, կարելիութիւն կայ անհատական բաժանորդագրութեան, որով կը պակսի ընթերցարան յաճախողներու թիւը: Այդ պարագան պատճառ կ'ըլլայ դադրեցնել բոլոր թերթերու բաժանորդագրութիւնը եւ ընթերցարանի փակումը:

1908 թուականին, երբ կը հռչակուի Օսմանեան սահմանադրութիւնը բաւական թիով թրքահայեր, անոնց կողքին եւ մտաւորականներ են «Գրասիրաց» եղբայրութեան վարչական 5 անդամներ կը վերադառնան իրենց բնակավայրերը: Ղեկավար ու գործուն ուժերու մասնակի պակասը միայն մասամբ կը դժարացնէ «Գրասիրաց»-ի հետագայի աշխատանքները: 1908—1913 շրջանին անոր վարչական կազմը շանք կը թափէ տարածել հայ գրականութիւնը երկսեռ հայ ուսանողներուն ու բանոր երիտասարդներու միջեւ, կը ձգտի Մատենադարանի ճոխացում, պահեստի դրամի անեցում: Այս հինգ տարոյ ընթացքին «Գրասիրաց» լուսատրական-մշակութային գործը կ'ընդգրկէ կազմակերպումը գրական ու երաժշտական ելոյթների, թատերական ներկայացումներու, պար երեկոյներու՝ աւելի շատ յեռուելով քաղաքի այլ կազմակերպութիւններու օժանդակութեամբ, առաջին կարգին «Վահան Մանուէլեան» — Գեղարուեստասիրաց» միութեան: Այս շրջանին «Գրասիրաց»-ի վարչութիւնը կը նախաձեռնէ Հայկական Մանտլին-կիթառ նուագախումբի մը ստեղծումը, որ կարճատեւ կեանք մը կ'ունենայ Պալքանեան պատերազմի պատճառով, ինչպէս եւ Հայկական երկսեռ Երգեցիկ խումբ մը, որ աւելի ուշ պիտի դադրէր գոյութիւն ունենալ:

Պատկեր մը տալու համար «Գրասիրաց»-ի 1914 թուականի գրային ֆոնտին վիճակը եւ այլ վիճակագրական տուեալներ յիշենք թէ նոյն տարին Մատենադարանը ունեցած է 1240 գիրք կազմուած 1001 հատորներու մէջ, 329 ֆրանսերէն եւ այլ օտար լեզուներով գիրք, 71 կանոնաւոր վճարող անդամ, իսկ ընթերցողներու թիւը ցոյց կը տրուի 946 հոգի: Մասնաւոր աղիւսակ մը կը ներկայացնէ 18 Մայիս 1913—9 Մարտ 1914 շրջանի երկսեռ ընթերցողներու քանակը ըստ անոնց գրած հասարակական դիրքին որմէ ի յայտ կու գայ թէ ամենամեծ թիւը կը պատկանի պաշտօնեայ, ուսուցիչ ու ազատ ասպարէզ սիւնակին, 82 աշակերտ-ուսանողներու, 115 արհեստավորներ ու 89 խանութպան ու վաճառական: Նոյն աղիւսակէն կը պարզուի, որ գեղարուեստական գրականութիւնը հիմնական տեղը կը գրաւէ եւ գրեթէ հաւասար չափով գիտական ու պատմական գիրքերը:

«Գրասիրաց» եղբայրութեան 30 ամեայ գործունէութեան շրջանը ամենաբեղմնաւորը պէտք է համարել համեմատած միւս ժամանակահատուածներուն հետ: Ան կը դրսևորուի ոչ միայն իր բազմակողմանի լուսատրական-մշակութային աշխատանքներով, այլեւ տարբեր բաժիններ հիմնելով, իր աշխատանքի ճոր օղակներ ստեղծելով, հակառակ որ ոչ անոնցմէ բոլորը աւելի երկար կեանք մը ունենալու հնարաւորութիւնը ունեցան:

Հայրենասիրակիեամբ տոգորուած եւ անշահախնդիր անձնաւորութիւններ եղած են անոր վարչական անդամները, որոնց կարգին արժէ յիշել եւ արժանի տալ վարչութեան առաջին նախագահ 1883—1886 ու հիմնադիր «Գրասիրաց»-ի՝ Տաճատ Լուիֆեանին, եւ յաջորդ նախագահներուն՝ Գաբրիէլ Թոքաթեան 1887—1890, Թաւոր Գ. Հինդլեան 1909—1912, Կոստո Սահակեան՝ 1891—1895, Երուանդ Յակոբեան՝ 1912—1914: Ամենաերկարամեայ նախագահ եղած է Առաքել Գազարեան՝ 1888—1889, 1890—1891 ու 1895—1909, որով եւ արժանացած «Գրասիրաց»-ի պատուոյ անդամի կոչումին: Յիշեալ անձնաւորութիւններէն ոմանք վարած են նաեւ ատենապետի կամ ատենադպիրի պաշտօնները տարբեր ժամանակաշրջանի համար: Ընդգծենք, որ անոնք ինչպէս եւ յետագայի վարչական անդամները իրենց պարտականութիւնը կատարած են հասարակական սկզբունքներով, վերածնունդի ոգիով: Հնոնութեան առարկայ 30 ամեայ շրջանին համար տրուած են մանրամասն հաշուեկշիռներ, որով յայտնաբերուած մը կարելի է կազմել ելքի ու մուտքի բաժիններուն մէջ եւ այլ կէտերու շուրջ: Անոնք հիմք առնելով որեւէ կասկած չառնէր գեղծումներու ու չարաշահութիւններու: Ատիկայ պատիւ կը քերէ «Գրասիրացի» այն ժամակալուայ վարչութիւններուն:

«Գրասիրաց» եղբայրութեան գործունէութեան երկրորդ փուլը կարելի է պարփակել 1914—1944 թուականներու միջեւ, երբ տակաւին օրինական թագաւորական ու դրամատիրական կարգուսարք գոյութիւն ուներ եւ փլուվտիահայ ընթերցարանը առանձին միատր էր իր առանձին վարչութեամբ: Այս ժամանակամիջոցը նոյնպէս 30 ամեայ մը կը ներկայացնէ եւ կը համընկի Առաջին ու Երկրորդ Համաշխարհային պատերազմներուն հետ: Այդ վերջինները իրենց աննպաստ անդրադարձումը կ'ունենան նախատեսուած գործերուն վրայ, աշխատանքի տարբեր օղակները լուծարքի կ'ենթարկուին, ելոյթները կը նուազին: Հիմնական օղակը կը մնայ Մատենադարանը, որ միայն կիրակի օրերը բաց

կը մնայ առաւօտեան 9—12, երբ տան ընթերցանութեան համար գիրքեր կը տրամադրուին ընթերցողներուն՝ անդամ կամ ոչ-անդամ: Տեղի կ'ունենան դասախօսութիւններ քաղաքիս հայ մտաւորականներու կողմէ: Աւելի աչքառու ձեռնարկ մը կը ներկայացնէ 1941 թ. վերջաւորութեան սկսած եւ 1942 ընթացքին շարունակուած Հայ գրականութեան դասընթացը, որուն ղեկավարն ու դասախօսը Ազգային վարժարանի տնօրէն հանգուցեալ Սուրէն Վեցիկեանն էր: Դասախօսութիւններու այդ շարքը յետոյ հրատարակուեցաւ որպէս առանձին գրքոյ՝ «Նշանաւոր Հայ Գրողներ 5—17 դար» խորագրին տակ: Այս շորջանին ալ մատենադարանի գիրքերը քարտարան չունէին և գիրքերու ընտրութիւնը կ'ըլլար քառանկիւն խաւաքարտերու վրայ արձանագրուած տուեալներով՝ ըստ վերնագրի ու հեղինակի:

Հանդէսներ ու այլ ձեռնարկներ «Գրասիրաց» այս շրջանին իրագործած է ազգային տարբեր միաւորումներու հետ կամ անոնց օժանդակութեամբ, որոնց մասին տեղեկութիւններ կարելի է գտնել տեղական հայ մամուլին մէջ:

«Գրասիրաց» Եղբայրութեան վերջին շրջանը կ'ընդգրկէ 9, 9. 1944 թ. մինչեւ 10, 11. 1989 թուականներու միջեւ ինկած ժամանակաշրջանը: Այդ ատեն Պուկարիա կ'ենթարկուի համայնավարական վարչակարգին, ոտնակոխ կ'ըլլան ժողովրդավարական սկզբունքները, իսկ մարքս-լենինեան գաղափարախօսութիւնը տիրական կը դառնայ երկրի մտաւոր ու հոգեւոր կեանքի բոլոր ոլորտներուն մէջ ներառեալ եւ նմանութիւնը: Դասակարգային մտտեցում կը տրուի մամէն մէկ հարցի արծարծման ու պարզարձման մէջ: Պուկարահայրութիւնը եթէ մէկ կողմէ սերտ յարաբերութիւններ մշակելու հնարաւորութիւնը կ'ունենայ նախկին Խորհրդային Հայաստանի հետ միակ հուշկական «Երեւան» մշակութային միութեան միջոցով եւ ատով նպաստել գաղութի մշակութային կեանքի վառ պահման, միւս կողմէ ան լրիւ կը կտրուի Սփիւռքի հայութենէն այստեղ նկատի չենք առներ արտասահմանեան հայ մամուլի որոշ վերնագրերու մուտքը մեզ մօտ, որոնք ձախակողմեան հոսանքին կը պատկանէին: Այդ էր պատճառը, որ բացի Հայաստանի մէջ տպուած գիրքերէ ուրիշ եւ ոչ մէկ գրականութիւն կը հասներ մեր գաղութը, ոչ ալ «Գրասիրաց» եղբայրութեան: Ինչպէս կ'ըսէն ասիկա թապու էր, իսկ յանդուողին համար վտանգաւոր:

Այս երկրորդ շրջանին «Գրասիրաց» եղբայրութիւնը կը կորսնցնէ իր առանձին գոյութիւնը եւ կը վերածուի «Երեւան» յառաջդիմական յետուային միայն մշակութային միութեան ենթաբաժինը՝ նախ յանձնախումբի ղեկավարութեամբ, աւելի վերջ միայն մէկ պատասխանատու անձ— որ վարչութեան անդամ է: 1944-ի աշնան «Պետո: Սերեմնեան» ընթերցարանը, որ մինչ այդ Դաշնակցութեան հովանիին տակ կը գտնուէր, իշխանութիւնը լուծարքի ենթարկեց եւ «Երեւան» միութեան յանձնախումբ մը անոր գրային ֆոնտը տեղափոխեց «Գրասիրաց»: Այն շփոթ օրերուն կորուստ մը պէտք է համարել, որ Վիեննայի Մխիթարեան ուխտի դպրոցական հարուստ գրադարանի գիրքերը փճացուցան գիտակցաբար կամ անգիտակցաբար համայնավար ընկերներ: 1945—1947 տարիներուն «Գրասիրաց»-ի կողքին կազմուեցաւ Երիտասարդական բաժին մը, բաղկացած աւելի շատ միջնակարգ վարժարաններու աշակերտներէ եւ ուսանողներէ, որ գրական հանդիպումներ ու վիճարանութիւններ կը կազմակերպէր տարբեր միութրու շուրջ, թատերական փոքրիկ ներկայացումներ կը սարքուէին, ինչպէս՝ «Կոտորուած հայելին», «Դոյնի վաճառական»-ը եւ այլն: Երկար կեանք մը չունեցաւ այդ բաժինը՝ անոր անդամներուն մեծամասնութիւնը ցրուեցաւ եւ ատով մշակութային եռուզեղ դարբեցաւ: 1950—1955 թուականներուն «Գրասիրաց»-ի նախաձեռնութեամբ Հայոց Պատմութեան շարք մը կը կազմակերպուի եւ դասախօսութիւնները կը ստանձնէ հանգուցեալ Վահէ Զերչեան: Քանի մը տասնեակ տարիներ «Գրասիրաց» ուներ իր յանձնախումբը «Երեւան» միութեան կողքին, որ կը պատրաստէր գրադարանի գործունէութեան ծրագիրները ըստ տարիներու եւ եռամսեաներու եւ ջանք կը թափէր զանոնք իրագործել: Տասնեակ դասախօսութիւններ ու հանդիսութիւններ արձանագրուած են, որ միութեան ընդհանուր ջանքերով իրագործուած են անոնց մէկ մասը վերագրուած «Գրասիրաց»-ին, որ պատկան իշխանութեան առջեւ որպէս օրինաւոր Ընթերցարան ընդունուած էր եւ անոր անունով դրամական նպաստ կը ստացուէր տեղույն քաղաքային խորհուրդէն: Ընտրիւ այդ դրութեան Մատենադարանի հայերէն գիրքերու կողքին որ շուրջ 6500 հատոր կը հաշուէր, հնարաւորութիւն ունեցաւ պուկարական բաժին մըն ալ ստեղծելու, որ ներկայիս իր գիրքերու քանակով կը գերազանցէ հայերէն գիրքերը: Պուկարեան բաժինը ներգրուեց որպէս ընթերցող Հայկական վարժարանի աշակերտութեան մէկ մասը:

Գրական ու լուսատրական յանձնախումբի մէջ իրենց աշխատանքի բաժինը ունին քազում անձներ, որոնցմէ միայն քանի մը անուններ յիշենք՝ Վահէ Զերչեան, Մարի Դանիլեան, Օ. Թազուրեան, Գառնիկ Պատուականեան, Յակոբ Կիլիկեան եւ այլն: Նկատի ունենալով, որ արխիւային գիւթեր ձեռքի տակ չունենալով լրիւ կերպով չէ կարելի «Գրա-

սիրաց»-ի երկրորդ ու երրորդ շրջանի մասին անելի հանգամանորեն ներկայացնել անոր գործունեությունը որ մասամբ տեղական հայ մաժուլէն կարելի է պրպտումներով ձեռք ձգել: Այդ պատճառով ալ միայն անելի ծանօթ իրողութիւններու կրնանք անդրադառնալ:

Գրադրանավարի աշխատանքը 1944-էն ետք մինչեւ 1960 թ. տարած են տարբեր անձեր՝ Սուքիաս Եաղուպեան, Վիքթորիա Ներսէսեան, Մարի Դանիէլեան, տիկ. Արիսեան, իսկ 1961 թուականէն վերջ՝ մինչեւ ներկայիս՝ տիկ. Ոսկա Արզարեան սիմպոլիկ վարձատրութեամբ մը: Ան գրադարանը բաց կը պահէ կանոնաւոր կերպով չորեքշաբթի կէս օրէ վերջ ժամը 14-էն մինչեւ 16.30 երբ կիներու հաւաքին մասնակցութիւն կը բերէ որոշ ելոյթներով եւ կիրակի օրերը առաւօտեան ժամը 9-էն մինչեւ ժամը 12: Պէտք է յատուկ ընդգծել, որ տիկ. Ոսկա Արզարեան ու իր ամուսինը հանգուցեալ Վահրամ Արզարեան ընդհանրապէս եղան գրադարանի գիրքերու սխտեմաւորման՝ նախապէս Խ. Հայաստանէն ապահովելով հարկ եղած քարտատրման համակարգի ուղեցոյցը: Այդ մեծ աշխատանքը ամիսներ տեւեց եւ իրագործուեցաւ գլխաւոր նպատակը եւ այսօր գիտական հիմունքներու վրայ կազմուած քարտարանը կը հեշտացնէ ըստ հեղինակային կարգին դիրքաւ գտնել տուեալ բնագաւառի որեւէ գիրք: Այս ձեռնարկը նորութիւն մը եղաւ «Գրասիրաց»-ի 110 ամեայ կեանքին մէջ, որուն նեցուկ եղաւ եւ «Երեւան» մշակութային միութեան տեղական վարչութիւնը:

Այսօր «Գրասիրաց» լոկ գրադարան մը չի, այլ իր գրային ֆոնտով Մատենադարանի հանգամանք ունի մեր պայմաններուն համեմատ: Ան հարստացած է անցեալի նուիրատուութիւններու ու գնումներու միջոցով, իսկ վերջին 45 տարիներուն՝ Հայաստանէն ստացուած բազմահարիւր գիրքերով ու պարբերականներով: Երջան մը եղաւ երբ հարկ էր ան իր գրային հին գանձէն քաժի հանէ Երեւանի Մատենադարանին, եւ 1965 թ. հոն առաքուեցան պ. Վարդան Գրիգորեանի միջոցով՝ այն ժամանակ գիտական քարտուղար 768 հնամտիպ գիրք ու պարբերական մամուլ, իսկ ուրիշ առիթով տակաւին 194 արժեքաւոր գիրք, որուն համար յատուկ պարգեւատրում եղաւ Մատենադարանի տնօրէնութեան կողմէ: Այդ գիրքերու կողքին բազմաթիւ էին Վեներտիկի հրատարակութիւններ, տեղական պարբերական մամուլն «Ռազմիկ», «Ծարժում» եւ այլ պարբերականներ:

Մինչեւ Ազգային վարժարանի Մանկապարտեզի շէնքը Հայ Մշակոյթի տան վերածուիլը «Գրասիրաց»-ի Մատենադարանը անոր սրահին մէջ մեծ պահարաններու մէջ ամփոփուած էին: Տարիներ վերջ, երբ վերաշինութեան պահը եկաւ, Մատենադարանը փոփադրուեցաւ 1944-ին աւարտած Ազգային վարժարանի նոր շէնքը եւ նոր դարակներու վրայ տեղադրուեցան:

«Գրասիրաց» որպէս են ենթաբաժին «Երեւան» միութեան տասնեակ տարիներ իր տարեկան ու եռամսեայ գործունեութեան ծրագիրները ունեցաւ պատրաստուած մասնաւոր յանձնախումբի կողմէ:

Այսօր Մատենադարանի յատկացուած քաժինը արդեն ներ է ոչ միայն ընթերցարան մը բնաճալու այլեւ գիրքերուն համար, որոնց մէկ մասը նոյնիսկ տախտակամածի վրայ դիզուած են կամ աթոռներու վրայ շարուած: Բախտ մը պիտի ըլլայ եթէ անոնք այդ վիճակով հրդեհի ճարակ չի դառնան, ինչպէս տարիներ առաջ նման դէպքէ քիչ վնասներով «Գրասիրաց» իր Մատենադարանը փրկեց: Գրային ֆոնտի ստուգում քիչ անգամ կատարուած է. անոր վերջին ստուգումը տեղի ունեցած է 1971 թուականին «Երեւան» տեղական վարչութեան կողմէ նշանակուած յատուկ քննիչ-յանձնախումբի աշխատանքի շնորհի: Այդ ստուգումը ցոյց տուած է, որ Մատենադարանի գրային ֆոնտը՝ գիրք ու պարբերական կը հաշուէ 11.000 հատոր: Այնտեղ ցոյց տրուած են նաեւ գիրքերու պակասը, քայքայուած գիրքերու քանակը եւ այլն:

Վերջին երեք տարիներու ընթացքին 1990—1993 երբ արդեն համայնավարական իշխանութեան վերջ տրուեցաւ եւ Պուլկարիա յետզետէ դրամատիրական ճամբով սկսաւ ընթանալ, արեւմտեան ռմակավար հասարակութեան օրինակները փորձելով կեանքի հրաւիրել, «Գրասիրաց» համեստ գործունեութիւն մը ցոյց տուած է «Համազգային» մշակութային ու կրթական միութեան Փոլովտիի «Երեւան» մասնաճիւղի հովանիին տակ, անոնց կողքին նաեւ ճշունը «Գրասիրաց» Եղբայրութեան հիմնադրութեան 110 ամեակը:

Ներկայիս անելի ինքնիշխան գործելու ասպարէզ կայ, առանց կաշկանդումի կարելի է ծաւալել անելի եռանդուն աշխատանք մը, սակայն դժբախտաբար հայկականութենէ օտարացած նոր սերունդ մը կայ ներկայիս, քիչ բացառութեամբ, որ դժուար կը մտենայ ազգային կեանքին: Համայնավարական վարչակարգի դրօշը դրուած է անոնց հոգեբանութեան մէջ եւ անգիտակ մեծամասամբ իր մայրենիին, նոյնիսկ դարձած է հայերէն գիրք կարդալ, իսկ հարուստ շտեմարան մը կայ ինչպիսին է «Գրասիրաց»-ի մատենադարանը, որ շատ կողմերով կարող է գոհացնել անոր հետաքրքրութիւնը: Վերջին տարուայ ցոյց կու տան, որ մատենադարանին մէջ ամփոփուած են 17.084 գիրք որոնցմէ 928

հատը ձեռք ձգուած են անհատական նուիրատուութիւններէ, որոնցմէ կէսէն աւելի պուկարերէն լեզուով են, քիչ քանակութեամբ ուսերէն, մնացեալ մասը հայերէն լեզուով են: Օտար լեզուով այլ գիրքեր՝ ֆրանսերէն, իտալերէն, հայաստան թուրքերէն եւ ոչպայծմեական գիրքեր շրջանառութենէ հանուած են, առանց փնացուած ըլլալու: «Գրասիրաց»-ի ընթերցողներու թիւը ներկայիս 76 հոգի որոնցմէ բարձրագոյն կրթութեամբ 5 հոգի, կիներ՝ 40 հոգի եւ վարժարանի աշակերտներ մինչեւ 14 տարեկան՝ 31 հոգի: Նկատելի է այր ընթերցողներու սակաւութիւնը եւ երիտասարդներու լրիւ բացակայութիւնը, որ յուսարիչ երեւոյթ մը չէ: 1993 տարուոյ ընթացքին բաժնուած են 820 գիրք կամ միջին հաշուով մէկ ընթերցողին կ'իյնայ շուրջ 11 գիրք:

Կը մնայ խորհիլ «Գրասիրաց»-ի ապագայի մասին: Միզուցէ հարկ ըլլայ վերականգնել անոր ինքնիշխան վիճակը, վերածելով առանձին լուսաւորական-մշակութային միաւորում, վերահաստատել անոր անդամակցութիւնը Պուկար Ընթերցարաններու միութեան, ունենայ իր վարչութիւնը, իր պիտոնէն, իր անդամական կազմը ազատ գործունէութեան համար, իսկ որոշ պարագաներու քաղաքիս այլ հայկական կամ պուկարական միաւորումներու հետ: Ան լաւ է դառնայ ամբողջ փոփոխահայութեան լուսաւորութեան ու գեղեցիկ գրականութեան կեդրոնը եւ անոր բազում գանձերը մասշտիպ ըլլան ամէն մէկ անձի համար, որ գիրքը կը սիրէ, նախանձախնդիր է հայօրէն ապրելու նաեւ հայ գիրքի միջոցով եւ իր աշխատանքը չի զլանայ «Գրասիրաց»-ի յարատեւութեան ի նպաստ: Ան պատիւ մըն է ամբողջ Պուկարահայութեան, ոչ միայն անոր համար որ ան Պուկարիոյ ամէնահին հայկական ընթերցարանն է, այլեւ ամենահարուստը իր հնատիպ գիրքերով ու պարբերականներով, որոնց մէկ մասը 18-րդ ու 19-րդ դարու սկիզբէն են, առանց յիշելու եւ նոր տպագրութիւնները: Կ'արժէ բարձրացնել «Գրասիրաց»-ի հեղինակութիւնը մեր գաղութէն ներս ընդհանուր ջանքերով ու համատեղ աշխատանքով:

#### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Տեղեկագրութիւն Գրասիրաց եղբայրութեան երեսնամեայ գործունէութեան, 1883—1914, Ֆիլիպէ: Պուկարահայ գաղութի վրայ պատմական ակնարկով մը: Կ. Պոլիս Տպագր. Յ. Ասատուրեան եւ Որդիք, 1914, 55 էջ:

<sup>2</sup> Նշան Եիշմանեան— 1867 թուականէն յետոյ ուսուցիչ Փոլստիի Ազգային վարժարանի մէջ քանի մը տարիներու ընթացքին, իսկ վերջը՝ Ղեւոնդ եպիսկոպոս Փոքր Ասիոյ մէջ:

<sup>3</sup> Տաճատ Լուսֆեան— ուսուցիչ Փոլստիի Ազգ. վարժարանի մէջ մինչեւ 1886 թուականը, ուսուցչութեան սկզբնաւորման թուականը անտոյգ, հեղինակ պուկարահայ առաջին երկու գիրքերու՝ մէկը հայաստան թուրքերէն, միւսը՝ հայերէն, երկուքն ալ լոյս տեսած 1885 թուականին, Փոլստի:

<sup>4</sup> Կանոնագիր Գրասիրաց Եղբայրութեան հիմնեալ 1883 թուականին: Ֆիլիպէ Տպարան, «Ռազմիկ» 1905, 8 էջ:

<sup>5</sup> Կարապետ Տողրամանեան՝ գրական անունով Վահան Մանուկեան— Հ. Յ. Դաշակցութեան անդամ ուսուցիչ Փոլստիի Ազգ. վարժարանի մէջ 1898—1900: Զոհուած 1904 թ. ազատագրական պայքարին մէջ:

**АКОП КИЛИКЯН (Болгария)—110-летний путь Читальни «Общества любителей чтения» болгарских армян.**— Первая армянская библиотека-читальня была основана в 1883 г. по инициативе армянской интеллигенции Болгарии, находящейся тогда под турецким игом. Читальня собрала вокруг себя всех активных национальных общественных и политических деятелей и сыграла значительную роль в сохранении национального облика армян, их культурного и физического существования. Автор выражает обеспокоенность нынешним спадом активности молодежи в «Обществе» и делает ряд предложений по оживлению ее деятельности.